

մնացեր իւր ազդեցութենէն: Զեռաւորներու՝ Վրաց եւ Աղուանից, Սիւնեաց դաշնակից, մերձաւորներու բռնաբարիչ, Զայաստան այնպիսի փառասեր, յանդուգն մարդ մը չի տեսաւ Վասակ Սիւնիէն ի վեր: Թագաւորել միմիայն երազն է այդ մարդուն: Կինն էլ իրեն յարմար, տունն նստել չգիտէ, քաղքէ քաղաք կը շրջագայի աղջկութենէն որսորդութեան սովոր կին, քաղաքներ, վիճակներ որսալու կ'աշխատի, չա՛ր օրինակ ամէն իշխանագն կանանց, որ վաղը պիտի ելնեն իշխանութիւնը բաժնելու իրենց երկանց հետ, եւ ամէն տունն ապստամբութեան եւ խռովութեան բոյն պիտի դառնայ: Այդ կնոջ բանասարկութեամբ, խառնակչութեամբ ղզնունեաց գաւառին տէր դարձան Ռշտունիք. երկու-երեք իշխանք խաղաղութեամբ կը տիրէին հրկրին, այդ կինը առանց երեւալու, առանց տեսնուելու մին միւսի հետ ձգեց: Ճիշտ այն ժամանակին, երբ ես զբաղած էի Զաշտենից գաւառի գործերու հետ, իշխանը հիւսիսականաց դէմ էր գնացեր: Ենք կին՝ առանց ամաչելու եկաւ Դատուան նստաւ արքայօրէն ճոխութեամբ, ատեան կապեց, ամբաստանութիւնք հնարեց, իշխան մարդիկ զատել, դատապարտել տուաւ, ինք առերեսս ներկա չի գտնուելով՝ իբրեւ թէ բանի մը չի խառնուեցաւ, եւ միայն վճիռն ի գործ դրաւ. մէկը Բաղէշու բերդը փակեց իբրեւ մահապարտ դատապարտեալ, միւսը՝ որու յանցանքը մեզի բողոք ըրած լինիլն էր, անբնակ կղզի մը դնել տուաւ ընտանեօք եւ երկիրներն գրաւեց. միայն Գարեգին Բզնունի, որ ոչխարի պէս ապուշ մէկն էր, թողուց երկրին մէջ, եւ դարձեալ ապահով չի համարելով Ռշտունեաց իշխանութիւնը՝ իյրտուիլակ բերաւ հաստատեց ծովան եզերքը այդ դաժան ծերը, Ատոմ Շահունին: Իսկ ինք՝ միշտ զբաղած է. ահա երրորդ կաթողիկոսն է, որ կը դնէ, միշտ նախարարաց ժողով կը հնարէ Դուին, եւ ժողովին մէջ ինք կը խօսի, ինք կը գործէ. համարինք թէ զինուոր է, զինուորութեան վրայ վիճի եւ վճռէ, իշխան է կառավարութենէ կը հասկնայ իրաւունք ունենա իրամայելու, բայց ի՛նչ ընենք, որ վարդապետ, եպիսկոպոս, կաթողիկոս կը լռեցնէ, գլխնոյն աստուածաբան կը դառնա: Գիտեմ, իր փափագը միշտ ան եղած է, որ հաստատ ժողով մը կազմէ նախարարաց ի Դուին, եւ այդ ժողովքին զօրութեամբ իշխէ բոլոր Զայաստանի, բայց Մուշեղ դեռ կենդանի է:

Զամագասպ լուռ մտիկ կ'ընէր այս խօսակցութիւնը, թեպէտ լաւ դիտէր թշնամիք, որ իրար կ'ատեն երբեք արդար չեն կրնար լինիլ իրենց դատողութեանց մէջ: Ուստի նստաւ, Մուշեղի բերնէն երկայն պատասխան գրեց Կամսարական իշխանի նամակին, մերժելով կանանց ամէն ժառանգական իրաւունք գաւառաց վրայ, հազիւ թէ ընդունելով Դաւթի իւր եղբորորդուն իրաւունքը հայրենի բնակարանին վրայ, որ էր Վարդանաբերդ: Այս նամակը Զամագասպայ ձեռք գրեալ՝ Մուշեղի կնքով վաւերացեալ, երբ կը սպասէին Չաւենի Ս. Կարապետէ վերադարձին, որ յանձնէն եւ երթա, ահա թուղթ մը